

10468



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



Arman Meymaryan

«20» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 195 - 24

Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

ք. Երևան, Նոր Նորք, Միկոյան Փ./Շ/13/42 բն

Գործունեությունը՝

Այգեստան բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում

Արարաբի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 195 - 24

«20» սեպտեմբերի 2024թ.

Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեստան բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Լուր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Այգեստան բնակավայր

Ներածական մաս. «Լուր» ՍՊԸ-ի (նաև նախաձեռնող կազմակերպություն) կողմից՝ փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Այգեստան բնակավայրում կառուցել միջնակարգ դպրոց, որի պատվիրատուն հանդիսանում է «Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այանս» ՍՊԸ կոնսորցիումը:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ցրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:



Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեստան բնակավայրում: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Արարատյան լճակուտակումային հարթավայրի սահմաններում: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 860.0-861.0 մետրի սահմաններում: Համաձայն ներկայացված ինժեներատեխնիկական ուսումնասիրության արդյունքների տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ընթացքում մինչև 11.0 մետր խորությամբ գրունտային ջրեր չեն բացահայտվել:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել՝ նոր դպրոցի շենքի և կաթսայատան կառուցում՝ գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժում, նոր դպրոցի կառուցապատումից ազատ տարածքների և ապամոնտաժված դպրոցի տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Նոր դպրոցը նախատեսված է 432 աշակերտի համար: Դպրոցը նախատեսվում է կառուցել երկհարկ, որը կունենա նաև նկուղային մեկ հարկ՝ 3.3 մ բարձրությամբ և 620 ք.մ մակերեսով: Շենքի ներսում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ, ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ լուսավորություն ապահովելու համար:

Առաջին հարկում տեղակայված կլինեն 1-ից մինչև 5-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված 2-ական դասարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ռաուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն՝ իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից՝ հաշմանդամների համար նախատեսված է ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասարահը, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն:

Երկրորդ հարկում նախատեսված կլինեն նաև պատշգամբներ: Հարկում տեղակայված կլինեն 6-ից մինչև 12-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված դասարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ռաուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանն՝ իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանն՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճն՝ իրեն սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Դասասենյակները կունենան 7մ x 7մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կկազմի 48 մ²:



Հատակագծում դպրոցն ունի ուղղանկյուն եզրագիծ և կարանով բաժանված է երկու հավասար մասնաշենքերի:

Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կկազմի 3.3 մետր, իսկ երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կկազմի 3.0 մ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կկազմի 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը՝ հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ՝ 4.5 մ:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար: Այն հատակագծում ունի 6մ x 9մ առանցքային չափեր:

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ:

Դպրոցի շենքի տանիքին նախատեսվում է տեղադրել 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ:

Գազամատակարարման և էլեկտրոսնուցման արտաքին ցանցերի միացումները կատարվելու են անմիջապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Նախագծվող դպրոցի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Մարգարյան փողոցի քաղաքային ջրագծից:

Կեղտաջրերը ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է տարածքում տեղադրված կոյուղու մաքրման կայանին: Անձրևաջրերը կհավաքվեն ոռոգման և արտաքին հրդեհամարման համար նախատեսված ռեզերվուարներում՝ համապատասխանաբար 46մ³ և 108 մ³ ծավալներով, որոնք կօգտագործվեն դպրոցի կանաչապատ գոտիների և հրդեհամարման կարիքների համար:

Նոր դպրոցի կառուցումից հետո, գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով՝ փուլ առ փուլ, կկիրառվեն ձեռքի կտրող գործիքներ և զոդման տեխնիկա՝ բացառելով այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի մակերես՝ 17900 քմ (100 %),
- կառուցապատման մակերես՝ 3548 քմ (19.6 %),
- կանաչապատման մակերես՝ 11456 քմ (64%),
- անջրանցիկ մակերես՝ 958 քմ (5.8 %),
- Բացօթյա մարզադաշտի մակերես՝ 1460 քմ (8 %),
- Բացօթյա մարզահրապարակի մակերես՝ 478 քմ (2.6 %):



Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 7530 խմ, որից հետլիցքը՝ 4400 խմ, մնացած 3130 խմ քանակով հողը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Դպրոցի տարածքում գոյություն ունեն ընդհանուր թվով 61 ծառեր՝ բարդիներ, եղևնիներ և մրգատու ծառեր: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում դրանք բոլորը կպահպանվեն՝ բացառությամբ 3 ծառերի, որոնց հատումն անխուսափելի է: Սակայն հատված ծառերի փոխարեն նախատեսվում է իրականացնել ավելի քան 400 հատ նոր ծառերի տնկարկ: Ուսումնասիրելով տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման համար ընտրվել են՝ թխկի դաշտային՝ 50 հատ, կիպարիս՝ 13 հատ, սյունաձև թույա՝ 38 հատ, բարդի արծաթափայլ՝ 64 հատ, բարբարիս՝ 18 հատ, ասպիրակ՝ 38 հատ, ֆորգիցիա՝ 17 հատ, խենոմելես՝ 23 հատ, ալբիցիա՝ 30 հատ, եղևնի փշոտ՝ 31 հատ, գիհի կազակական՝ 44 հատ, հուդայածառ՝ 23 հատ, բալենի կանգան՝ 21 հատ: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք՝ 815 մ³ ծավալով, որի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- շենքերի քանդումից շինարարական աղբի առաջացում, որը կօգտագործվի կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,



- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) գնահատվում է մոտ 1.5 մլն. ՀՀ դրամ:



Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեստան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:



ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Լուք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեստան բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան